

առ ընդհանուրը և անհատականին ետև՝  
 ընկերայինը: Ան այս շփոթութենէն, անու-  
 թոշութենէն, ժանտախաւէն, և անթութե-  
 նէն, այս քառուէն տնդին, նոր լուսաբաց  
 մը կը տեսնէր: Ան վստահ էր որ երկինք  
 ու երկիր մարդկային նոր ընկերութիւն մը  
 կ'երկնէին, ուրիշ գրիչը ձեռին իբր հաւա-  
 տուոր առաքեալը այդ հեռապատկերին  
 քալից անվարան:

Լենինի մահը շատ յուզեց Մայաքովս-  
 կին, յանձին անոր՝ կորսնցուցած էր իր ա-  
 մենէն մեծ բարեկամը և խորհրդատուն:  
 Ամբողջ Խորհրդային երկիրը մինչպս չէր  
 աչքին ծայրէ ծայր: Իր յուզումը մեծ էր  
 և խորունկ: Այս առթիւ գրեց իր քառա-  
 սուն էջնոց երկարաշունչ վլասիվիր Լենինը.  
 «Այս զիւցազնեղբորութիւն մըն է, որ կոչ-  
 ուած է զասուելու աշխարհի մեծագոյն  
 քերթուածներու շարքին», կը հաւատաէ  
 Հըրպըթ Մարշըլ:

1922—1927 ան արտասահման գնաց,  
 պտըտեցաւ Եւրոպան ու Ամերիկան: Իր  
 տպաւորութիւնները տուաւ քերթուածնե-  
 բու շարքով մը: Անոնց մէջ Քուր Էյմիլը  
 և Ռուսակյան Բասթօրը պերճասօսութե կ'ար-  
 տայայտեն իր զգացումները:

1930-ին երբ տաղին Հնգամիայ բլանը  
 ծրարութեցաւ և գործադրութեան գրուե-  
 ցաւ, Մայաքովսկի լեցուած էր նոր տենդով  
 և բացառիկ խանգաղաուութեամբ: Ան կը  
 պատրաստուէր նոր զիւցազնեղբորութիւնով  
 մը պանծացնել և շեփորել այս հսկայ հա-  
 մայնական ձեռնարկը, երբ վրայ հասաւ իր  
 ինքնասպանութիւնը:

Կ'ըսուի թէ իր երկտասարդութեան,  
 յուսահատութեան նուպախի մը, փորձած էր  
 նոյնը, սակայն կապարը վրիպած էր: Բայց  
 այս անգամ ճակատագիրը անողոք էր ե-  
 ղած, և պատահած էր անխուսափելին.  
 Մայաքովսկին կ'երթար իր տեղը զբաւելու  
 եղբորաբախտ ու մեծ քերթողներու կողքին:

ՅՈՎ. Հ. ԵՒՉՈՒՄԷԼԵԱՆ



**ՆՇՆԱՐԻՔ ՆՆՄՆԵՆՆՅ**

**ՔԱՐՈՁ ԾՆՆԴԻ**

ԵՐ

**ՏԵԱՌԵՆՆԴԱՌԱՋԻ**

Ս. Արոնոյս Զեռագրասան Ք. 271 ձա-  
 շոցիկ արագրած ինք հետեւեալ Գանձը: Սոյն  
 ձաշոցը գրուած է ւնծ քոչորցրով, Մրուս-  
 սի սկզ, տեղոյս Դաւիթ Խախապոսիկ հա-  
 մար, 1316 րուին, Ստեփանոս Վերկայնց Գրչի  
 ձեռնով:

Այս Գանձին հնդկական է Ղուկաս, ինչ-  
 պես կը հասկցուի տեսակցորի գրեհն, որով  
 կը կազմեն Ղուկասայ երգ բառերը: Տասննե-  
 չորրորդ դարու սկիզբը կամ անկի առաջ Ղու-  
 կաս ակունով գրող ծանօթ չէ սկզի ուրիշ  
 տեղի:

Գանձս գուրկ չէ փերոդական շնորհի:  
 Հնդկական պատկերային բացատրութեանով կը  
 դրուեսի Ս. Կոյսը: Ան կը սիրէ նմանատու-  
 րեանք տեղոյն որոշ հրավշակաւորութիւն: Կե-  
 սադրութիւնը ասկայն, որ տեղ տեղ քերի է,  
 ինչպես կը յայտնուի ընթերցման ժամանակ,  
 քոչուցիկ անփոփոխ:

Ղամպար մշտափայլ անշիջանելի, ճառա-  
 քայթ արփիւած փայլուն փայլեալ ի փառս  
 սեռի արդկութեանս, լոյս մշտնջենա-  
 ծալ յայտնեալ աշխարհի, վտանգ քաղ-  
 ցրութեան անմահարար գետոյն ծաւալ-  
 ման, արմատ կինդանութեանը շառաւիղ  
 փրկութեան բեղունոր քուրաստան հայ-  
 բածին բարունակին, բաժակ բերկրանաց  
 հրաւէր հրծուանաց մանկանց սիրովը,  
 խնդութիւն անթերանալի միջնորդ երկ-  
 նի եւ երկրի Աճածին Մարիամ, ըզքեզ  
 ունիւք բարեխոս առ մարմնացեալդ Աճ  
 աղաչեմք:

Ուրախ լեր հրաշագորգ և հարսնարան ան-  
 ճառ իսկութեան անմկնելի լուսոյն հայ-  
 քական, հիանշմաբ խառնարան բանկապ  
 տնօրէնութեան քանին Աճյ միւտորու-  
 թեան, առագաստ սրբութեան փեսային  
 մարմնազգեցութեան, որ տիրապէս ներ-

գործեալ զԱզատն առաջին Աճակերպ  
չարգարեաց . ըզքեզ . . . :

Ինթեզէն սերովբէ և անձնաւոր քերովբէ  
վեհազայն . . . իցն զերակիցըն սեռից ,  
զանտեսն վերնոցն իսկապէս տարար  
յարգանդի , զանտանելիյն երկնի և երկրի  
կրիցեր իննամսեայ ժամանակ զժառանգն  
անբաւ յաւիտեանց , հոգւոն զօրու-  
թեամբըն հովանաւորեալ և ի բարձանց  
ծագմանէ բերեալ զբերկրունն . ըզքեզ . . . :

Կենդանարար լուսոյն ճեմարան եւ ճրագ  
եւթնարփեան համապայծառ հրոյն բոր-  
բոքման , անկիւնելի վառեալ մորենի ան-  
հրպիլի համամարդկանոցս անթարգմա-  
նելի , զարմանահարշ տանք նորոգեալ  
գուռն փակեալ ըստ տեսիլանն եղեկիէ-  
լի , շառաւիղ անհետապօտելի տումար  
անվերածանելի փակեալ ի զգալեաց եւ  
պահեալ Յի . . . էին էակցի ընդ չօր մըշ-  
տահօօրի որ եմուտ և ել ի քէն Աճ աս-  
տուծոց . ըզքեզ . . . :

Այխարհալոյս ծընար ի յայրին անմուտ ա-  
րուսեակ , արեգականն արդարութեան  
եղեր արեւելք , կաթմար կուտական  
ստեամբ յորգարուղիս արբուցեր զանհա-  
ղորդն հիւթից , զրկեալ գգուցեցեր զրկօք  
հողեղէն բարձեալ բսկօք սրբութեան  
զարարողըն ճնաւից , հրպիւլ համբուրիւ  
հաղորդեալ ողջունիւ մերձեցար մաք-  
բապէս յանմատոցըն վերնօցըն լուծեր  
զտխրալն երկանց նախամաւրն Եւայի ,  
եւ զտիեզերս ապտեցեր յանիծիցըն .  
ըզքեզ . . . :

Սարեալ սարսփմամբ սոսկալի ձայնիւ  
պահուցեալ բիւրաւոր բանակք վերնոցն ,  
տեսնն տղայական կերպիւ զհինաւորաց  
Աճն երեւեալ , նըստատարբ բազմեալ ի  
մսուր անբաւելին բոյր եղականացս ,  
կաթմար կուսին կերակրի հացըն կենաց  
ամենայն մարդկան կենդանեաց , հնչէին  
տաւիղըս տեսչանաց և փռաւարբէին ըզ-  
բարձրեալըն բարձանց . ըզքեզ . . . :

Աստղանշան ծագումն յայտնեալ յարեւելս  
ազգաց կեռազանց , զուշակ զալստեան  
տեսչեան միաձնին խառնեալ խօսժայնոցն  
բրեեակ նըւիրօք , բերեալ բերկրանօք  
մատուցին ընծայս խորհրդոյ , պարաւ-

եալ պահէին դասապետք հովուացն եւ-  
եալ երկըրպագեցին նորածին արքային ,  
հրեշտակաց խառնեալ ընդ հովիւօրն  
փառք ի բարձունս երգէին և փռաւաւ-  
րէին ըզբարձրեալն . ըզքեզ . . . :

Յայտնեալ ընծայումն եկեալ ի տաճարն  
քառասնօրեայ աւուրքք սրբութեան աւ-  
րինադիր աւանդիցըն լրմամբ , ծանուց-  
եալ ծերունոյն հոգելից զժոցածին ծա-  
ղիկ նորահրաշ լուսոյն , զգուէր հիաց-  
մամբ հայցէր պաղատմամբ յաւրինական  
կապանացն արձակիլ ի խաղաղութիւն ,  
ընդ որս և մէք ընդձեռեալ հաւտի քո  
փոքու փրկեա զժողովուրդս քո և աւրհ-  
նեա զբժառանգութիւնս , և զհրժմար-  
եալսն ի քիզ հանդիսիւ հաւատով վե-  
րանորոգեալ ի կեանսըն յաւիտենից , ա-  
հա յիշեսցես և ողորմեսցիս հուզոց  
ննջեցիւրցն ի քեզ :

Եւ եւս առաւել . . . :

Բոտել վերստին ըզմերժեայսն առ ի քէն  
միջնորդութեամբ մարմնացելոյ ի քէն  
խընդըր . . . :

Գովեստ գոհութեան ընծայեմք ի հողոց  
համայնից . ամէնօրնեալ տիրամօրդ և  
Աճածնիդ , երկիւղիւ երկիր պագանեմք  
և ունիմք բարեխօս առ ճնեալդ ի քէն  
Աճ ճշմարիտ , հայցես հաշտութիւն մեզ  
պարտաւորելոցս մշտամատոց մատանցդ  
աղերսիւ . շնորհել մեզ ներումն կցոր-  
դութեան ի մաղթանս կենաց կարապե-  
տին և նախընտրեալ սարկաւազին և առ-  
աջին մարտիրոսին , ամպումար դա-  
սիւք երջանկօք առաքելօք և մարգա-  
րէականօք ի որ մերն է լուսաւորիչ ,  
բարեշաղթ վկայից և ամենայն օրոց և  
սիրողաց և դաւանողաց ըզձնիցեալդ ի  
քէն ստուռած ճշմարիտ . և այժմ ողոր-  
մեաց մեզ տր . Աճ մեր . . . :

Հրատ. Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ

